ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Օգոստոս 12, կիրակի։

Այսօր Ս. Աստվածածնի Վերափոխման տոնն է, համաժողովրդական մեծագույն տոներից մեկը, որը Մայր Աթոռում տոնվում է բացառիկ հանդիսությամբ և ավանդական շուքով։

Ուխտի օր է նաև այդ օր, մանավանդ մեր հավատացյալ ու բարեպաշտ մայրերի ու քույրերի համար, որոնց սրտերը ջերմ նվիրումով կապված են Ս. Աստվածածնի անվան ու կյանքի հետ։ Ս. Աստվածածնի տոնը դեռազանցապես հավատավոր կնոջ, նվիրված մոր տոնն է։

Եկեղեցին շարունակ աղաչում, խնդրում է «Մայր Սուրբ սքանչելի Լուսոյն», և աղոթում՝ «Աղաչեա վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած... զի լուսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի»։

Այսպիսի սուրբ խոհերով և խնդրվածքներով այսօր էլ, Աստվածածնի Վերափոխման տոնին, Մայր Աթոռ ուխտի է եկել մայրաքաղաքից, շրջաններից, եղբայրական հանրապետություններից բարեպաշտ ուխտավորների մի հսկա բազմություն, ավելի քան 10.000 հոգի, և լցրել Տաճարը, բակը, շրջակայքը։

Ժամը 11-ն է։ Զվարթագին զողանջում են Մայր Տաճարի զանգակները՝ ուխտավորներին հրավիրելու հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագի։

Վեհափառ Հայրապետը, զգեստավորված, եկեղեցական թափորով, ամպհովանու տակ, աղոթքով ու խնկով, սաղմոսներով, խաչով ու խաչվառով իջնում է Տաճար, ճանապարհին օրհնելով բազմահազար ուխտավորներին։ Տոնականորեն զարդարված Մայր Տաճարում պաշտվում է հանդիսավոր հայրապետական սուրբ պատարագ։ Երգում է Մայր Աթոռի երգչախումբը։ Ամենայն Հայոց Հայրապետը վերացած, բազկատարած, աղոթում է Իր հոտի համար։

Ամեն կողմ աղոթք, մրմունջ, խունկ ու վեհություն։

Ս. Պատարագի ավարտից հետո ուխտավորները ճաշակ են առնում Վեհափառ Հայրապետի ձեռքից։

Ապա Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է Տաճարում խաղողի ավանդական օրհնությունը։

Պատարագիչ Վեհափառ Հայրապետը նույն հանդիսությամբ առաջնորդվում է Վեհարան։

Ուխտավորների բազմությունը մինչև ուշ գիշեր մնում է վանքի շրջափակում և ապա բաժանվում է՝ օրվա խոհերով և հայրապետական սուրբ պատարագով հոգեպես միխթարված։